ՌՈՒԲԵՆՅԱՆ ԹՈՐՈՍ ԻՇԽԱՆԻ ԴՐԱՄՆԵՐԸ*

Մ. Ե. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հայատառ առաջին մետաղյա դրամները թողարկել են Կիլիկիայի Ռուբենյան իշխանները (1080—1198)։

Կիլիկյան Հայաստանի թագավորության շրջանից մեզ հասած հազարավոր դրամների շարքում իշխանական դրամները խիստ հազվադեպ են, ուստի և պատահական չէ, որ մինչև օրս Ռուբենյանների իշխանական դրամների դասակարգման մեջ կան շատ անորոշություններ։ Դրամներն անթվագիր են և դա խիստ դժվարացնում է նրանց ճշգրիտ ժամանակագրության կազմումը։ Հետևաբար իշխանական շրջանի յուրաքանչյուր նորահայտ դրամ գիտական արժեք է ներկայացնում՝ անհրաժեշտ դարձնելով կրկին անդրադառնալու այդ հարցին։

1968 թ. դրամագետ Խ. Ա. Մուշեղյանը Մոսկվայում, Սովետական Միության ժողովուրդների պատմության պետական թանգարանում ի հայտ բերեց Կիլիկյան խիստ հազվագյուտ մի դրամ[1]՝ Թորոս արձանագրությամբ, որը և այդօրինակ դրամների վերանայման առիթ հանդիսացավ։ Իշխանական շրջանի դրամների առաջին օրինակները, ինչպես և հետաքրքրությունը նրանց նկատմամբ ի հայտ են եկել դեռևս XIX դ.։ Նրանց անդրադարձել են Ղ. Ալիշանը[2], Կ. Բասմաջյանը[3], Մ. Երիցյանը[4], Յ. Տեր-Ղազարյանը[5], Պ. Կարապետյանը[6]։

Սակայն նրանցից և ոչ մեկը Թորոս արձանագրությամբ այժմ ներկայացվող տիպի դրամների վերաբերյալ որոշակի կարծիք չէր կարող հայտնել, քանի որ դրանք դեռևս հայտնի չէին։

Իշխանական շրջանի դրամներով առավել հանգամանորեն զբաղվել է Զ. Պտուկյանը[7], որն իր հրապարակած օրինակներից երկուսն իրավացիո-

---

* Հաղորդումը կարդացվել է 1969 թ. մայիսին ՍՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի սեսիայում։

1 Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում Խ. Մուշեղյանին նյութը տրամադրելու և ուսումնասիրությանն աջակցելու համար։

2 Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 378։

3 Կ. Բասմաջեան, Հայկական ընդհանուր դրամագիտություն, Վենետիկ, 1936, էջ 136։

4 Մ. Երիցյան, Հայ դրամագիտության համար («Բազմավեպ», 1930, № 4, էջ 167)։

5 Յ. Տեր-Ղազարյան, Լեւոն իշխանի պղնձեայ կիսադրամը («Զվարթնոց», 1930, VIII, էջ 409, 410)։

6 Պերճ Մ. Կարապետյան, Վենետիկի Մխիթարյան միաբանության ս. Ղազարու թանգարանին հայկական հին դրամներու հավաքածոները («Բազմավեպ», 1952, № 7—9, էջ 155)։

7 Զ. Պտուկյան, Ռուբենեան իշխաններու դրամները («Հանդես ամսօրյա», 1965, ապրիլ-հունիս, էջ 261—270)։

րեն վերագրում է Ռուբենյան Թորոս Ա. Իշխանին, ելնելով վերջիններիս տառաձևերից և արվեստից։ 1968 թ. Զ. Պտուկյանը մեզ ուղարկեց նույնատիպ ևս մեկ նորահայտ դրամի պատճենը, որ ձեռք է բերել իր հոդվածը հրատարակելուց հետո։

Մեզ հետաքրքրող դրամների խմբին են պատկանում նաև Հալեպից 1967 թ. Հայաստանի պատմության թանգարանին Պ. Սապպաղյանի ուղարկած մի շարք հայատառ դրամների լուսանկարներից երկուսը[8]։

Այսպիսով, Թորոս արձանագրությամբ նույնատիպ դրամներից մեզ հայտնի դարձան հինգ օրինակներ։ Դրանք են.

1. Առաջին երես. Դաշտի կենտրոնում պատկերված է հավասարաթև խաչ, վերցված կետավոր շրջագծի մեջ, որից դուրս բոլորաձև գրված է

ԹՈՐՈՍՄ··· կետավոր եզրագծով։

Երկրորդ երես. Կենտրոնում խաչ, թևերի տակ պատվագիր համառոտագրություններ՝ ձախից՝ ՆԲ, աջից՝ ՂԹ։ Խաչը ներքևում ունի երկու ճյուղ՝ ամբողջությամբ պահպանված կետավոր եզրագծով։ Պղինձ, քաշը՝ 2,33 գ, տրամագիծը՝ 18 մմ, կնիքի առանցքային ուղղությունն ուղիղ դեպի վեր։ Հրապարակվում է առաջին անգամ[9] (նկ. 1)։

2. Առաջին երես. Դաշտի կենտրոնում պատկերված է հավասարաթև խաչ՝ վերցված կետավոր շրջագծի մեջ, որից դուրս բոլորաձև գրված է

/Թ/ՈՐՈՍ/Ս՝ մասամբ պահպանված կետավոր եզրագծով։

Երկրորդ երես. Կենտրոնում խաչ, թևերի տակ պատվագիր համառոտագրություններ՝ ձախից՝ ՆԲ, աջից՝ ՂԹ։ Խաչը ներքևում ունի երկու ճյուղ՝ մի մասում պահպանված կետավոր եզրագծով։ Դրվագված է այլ կնիքով։ Պղինձ, քաշը՝ 0,75 գ, տրամագիծը՝ 17 մմ, պահվում է Նյու-Յորքում Զ. Պտուկյանի հավաքածուում, հրապարակված է[10] (նկ. 2)։

3. Առաջին երես. Դաշտի կենտրոնում պատկերված է հավասարաթև խաչ՝ վերցված կետավոր շրջագծի մեջ, արձանագրությունից պահպանված է

ԹՈ···Ր··։

---

8 Վերոհիշյալ դրամների պատճենների և լուսանկարների համար հայտնում ենք մեր շնորհակալություն դրամագետներ Զ. Պտուկյանին և Պ. Սապպաղյանին։

9 Սովետական Միության ժողովուրդների պատմության պետական թանգարան, դրամ № 93207—215։

10 Զ. Պտուկյան, նշվ. աշխ., էջ 261—270։

Երկրորդ երես. Կենտրոնում խաչ, թևերի տակ պատվագիր համառոտագրություններ՝ ձախից՝ ՆԲ, աջից՝ ՂՔ։ Խաչը ներքևում ունի երկու ճյուղ, դրվագված է այլ կնիքով։ Պղինձ, քաշը՝ 3,52 գ, տրամագիծը՝ 17 մմ, պահվում է Զ. Պոտուկյանի հավաքածուում[11]։

4. Առաջին երես. Դաշտի կենտրոնում պատկերված է հավասարաթև խաչ՝ վերցված կետավոր շրջագծի մեջ, որից դուրս բոլորաձև դրված է



։ Եզրագիծը ուղիղ է և պահպանված է մի փոքր մասում, դրվագված է այլ կնիքով։

Երկրորդ երես. Կենտրոնում խաչ, թևերի տակ պատվագիր համառոտագրություններ՝ ձախից՝ ՌԲ, աջից՝ Ղ՝ ամբողջությամբ պահպանված կետազարդ եզրագծով։ Դրվագված է այլ կնիքով։ Պղինձ, քաշը, տրամագիծը, պահպանման տեղն անհայտ են (նկ. 3)։

5. Առաջին երես. Դաշտի կենտրոնում պատկերված է հավասարաթև խաչ՝ վերցված շրջագծի մեջ, որից դուրս բոլորաձև գրված է Թ[ՈՐՈ]Ս...։ Եզրագիծը պահպանված է մի մասում։

Երկրորդ երես. Կենտրոնում խաչ, թևերի տակ պատվագիր համառոտագրություններ՝ ձախից՝ ՇԲ, աջից՝ ՂԼ։ Խաչը ներքևում ունի երկու ճյուղ՝ մի մասում պահպանված կետավոր եզրագծով։ Դրվագված է այլ կնիքով։ Պղինձ, քաշը, տրամագիծը և պահպանման տեղն անհայտ են (նկ. 4)։

Այսպիսով, բոլոր հինգ դրամները տարբեր կնիքների դրոշմ են կրում, թեև թե՛ առաջին և թե՛ երկրորդ երեսի համար ունեն պատկերատիպային ընդհանրություններ։ Նշենք, որ Ռուբենյանների իշխանական շրջանում թողարկված դրամներից առ այսօր մեզ հայտնի բոլոր օրինակները պղնձից են, հետևապես նրանք բավարարում էին ներքին առևտրի պահանջները։ Լուսանկարներից և եղած տվյալներից երևում է, որ նրանց տրամագծային տարբերությունները շատ չնչին են (17—18 մմ)։ Արձանագրությունները գրված են Կիլիկյան X—XII դդ. բնորոշ բոլորգրով, քիչ թեքությամբ։ Դրամների սակավությունը դժվարացնում է գրությունների վերջնական պարզաբանումը։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հնարավորության սահմաններում ամբողջացնել արձանագրությունների ընթերցումը, բացահայտել նշանագրերի նշանակությունը՝ հաստատելով վերոհիշյալ Թորոս գրությամբ դրամների պատկանելիությունը Ռուբենյան Թորոս Ա իշխանին։

---

11 Օգտվել ենք պատճենից, որի վրա կա Զ. Պոտուկյանի ընթերցումը ԹՈ...ՐԸ /ԹՈՐՈՍԻ ԷՌԲ/

Երկրորդ երեսի խաչի ձախ թևի տակ եղած [illegible] նշանագիրը Զ. Պտուկյանն ընթերցում է, որպես ՍՈՒՐԲ բառի կրճատված ձև[12], որը համոզիչ չէ։ Տվյալ համառոտագրության երկրորդ տառի Բ լինելը որևէ կասկածի տեղիք չի տալիս և երևում է դրեթե բոլոր օրինակների վրա։ Մինչդեռ Ս տառը կազմող էլեմենտներից առաջինը ցած է իջնում, որը չի համապատասխանում Ս տառի հայերեն գրելաձևին։ Մենք հակված ենք այդ տառն ընթերցել կսդրից, պատիվն ընդունելով որպես հայերեն Ռա ([illegible]) տառի առաջին սյուն[13], այսինքն այդտեղ առկա են երկու տառ, ՌԲ, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Ռուբեն անվան կրճատ ձևը։

Այս ենթադրությունը հաստատելու լավագույն օրինակ է հինգերորդ դրամի վրա պահպանված նշանագիրը, ուր Ռա տառի առաջին սյունը ամբողջական է (նկ. 5)։

Խաչի աջ կողմի պատվագրված ՂԹ նշանագիրը, որը բոլոր օրինակների վրա համեմատաբար լավ է պահպանված, մինչև օրս չի բացահայտված։ Այդ նշանագիրը հանդիպում է XII—XIV դդ. մի շարք ձեռագրերում. ինչպես՝

ՂԻ—Աղավնի	ՆԹ—անաւթ
ՄԹ—ամաւթ	ԴՄ—անդամ
ՐԿ—աւրինակ	ՂԹ—աղաւթք[14]

Իր նշանակությամբ ՂԹ նշանագիրը համապատասխանում է «աղաւթք» բառին։

Ա. Աբրահամյանը ուսումնասիրելով և դասակարգելով Կիլիկյան նշանագրերը, նրանց ստեղծման 5-րդ սկզբունքին է վերագրում այն հապավումները, որտեղ նշանագրի նախատառ է ընդունված բառի մի՛ն տառերից որևէ մեկը[15]։

Ելնելով դրանից դրամի երկրորդ երեսի վրա նշված նշանագրերը ՌՈՒԲԵՆԻ և ԱՂՈԹՔ կամ ԱՂՈԹՔՈՎ բառերի համառոտագրություններն են։

Դրամի առաջին երեսի վրա ԹՈՐՈՍ անունից հետո եկող տառերը պահպանված ձևերով Ր . . . Ի Ռ . . , [illegible] . . , [illegible] . . , Ռ Ռ . . չէին կարող ներկայացնել Ռուբենի անունը, քանի որ այն լրիվ գրելու համար

12 Զ. Պտուկյան, նշվ. աշխ., էջ 263։

13 Բոլոր օրինակների վրա պատվանշանը դնելով հակառակ ուղղությամբ փորագրիչ վարպետները թերևս կամեցել են ցույց տալ Ռ տառի հակառակ կողմից գրված լինելը։

14 ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան) ձեռագրեր № 2371, էջ 75—77, № 4149, էջ 365—368, № 2374, էջ 74—77։

15 Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, 1959, էջ 154։

անհրաժեշտ էր ավելի մեծ տարածություն դրամի կլորակի վրա, իսկ ՈՐ կրճատված ձևը ընդունելու դեպքում այնտեղ գտնում ենք ևս երկու տառերի հետքեր և համապատասխան տարածություն։ Ելնելով պահպանված տառաձևերից և միմյանց հաջորդող տարածությունից, հավանական է, որ այդտեղ եղել են ՈՐ(դի) գրերը և պետք է հասկանալ ՈՐԴԻ, մանավանդ, որ համառոտագրությունների ընթերցումը մեզ տալիս է Ռուբենի անունը երկրորդ երեսի վրա։

Այսպիսով, կարելի է դրամի երկու երեսի վրա եղած գրությունները ընթերցել «ԹՈՐՈՍ ՈՐԴԻ ՌՈՒԲԵՆԻ ԱՂՈԹՔՈՎ»։

Ռուբենը (1080—1095) Կիլիկիայի Հայկական իշխանության հիմնադիրն էր։ Արևելքում ընդունված ձևով, Կիլիկիայում ևս միջնադարյան վիմագիր արձանագրություններում և ժամանակագրական աղբյուրներում Ռուբենյան իշխանների ծագումը հետադարձ հաջորդականությամբ հիշատակում էին մինչև Ռուբենը, որպես հարստության հիմնադիր։ Բերենք մի քանի օրինակ.

Անավարզայում զորավարաց եկեղեցու պատի վրա Թորոս Ա-ի արձանագրության մեջ կարդում ենք.

Ի ԿԱՄՍ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒ-
ԹԵԱՆ ԵՍ ԹԷՈԹՈՍ... ՍԵԲԱՍՏՈՍ, ՈՐ-
ԴԻ ԿՈՍՏ.... ՈՐԴԻՈՅ ՌՈՒԲԵՆԻ ՇԻՆԵՑԻ
ՁԵԿԵՂԵՑԻՍ... . . . . .[16]

Կիրակոս Գանձակեցին Թորոս Բ իշխանի մասին գրում է. «Այս Թորոս իշխան և եղբայր իւր Ստեփանէ որդիք էին իշխանին Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռոսբենայ.....» և այլն[17]։ Ինչպես տեսնում ենք Թորոս Բ իշխանը (1144—1168) հիշատակվում է մինչև հարստության հիմնադիրը՝ Ռուբենը։

Մատթեոս Ուռհայեցին 1120 թ. դեպքերը նկարագրելիս գրում է. «Յայսմ ամի զօրաժողով արարին զօրքն Թուրքաց և մտին ի յաշխարհն Անաւարզա և արարին ասար զամենայն երկիրն և զմարտպա, իսկ մեծ իշխանն հայոց Թորոս՝ որդի Կոստանդեայ՝ որդի Ռուբենայ...» և այլն[18]։

Մեկ այլ տեղում Մատթեոս Ուռհայեցին Թորոս Ա իշխանին ուղղակի անվանում է ՈՐԴԻ ՌՈՒԲԵՆԻ։ Նա գրում է. «Իսկ ի թուականութեանն հայոց ի յամի ՇՂԶ [1117]... զորաժողով եղեալ ազգն պարսից երկոտասան հազար և անցեալ ընդ Տօրոս լեառն ի գաւառն, որ կոչի Անաւարզա և արար ասար զամենայն երկիրն Թորոսի՝ որդւոյ Ռուբենայ...» և այլն[19]։

Հետևաբար դրամի փոքրիկ տարածության վրա ՈՐԴԻ ՌՈՒԲԵՆԻ ձևի գործածությունը ավելի հնարավոր և ընդունելի ձև էր։

Կիլիկիայի հայկական պետության 8 իշխաններից միայն Թորոս Ա-ի գործունեությունն է սերտորեն կապված եղել եկեղեցաշինության հետ։ Այդ մասին բավական տեղեկություններ են պահպանված պատմական աղբյուրներում և վիմագիր արձանագրություններում։ Հայտնի է, որ հենց Թորոս Ա-ի

16 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 239։
17 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1909, էջ 101։
18 Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 316։
19 Նույն տեղում, էջ 305—306։


5
1
2
3
4

իշխանության շրջանում Անավարզայում կառուցվում է Զորավարաց եկեղեցին, վերաշինվում են Սիսի մոտ Դրազարկի և Մաշկեվորաց եկեղեցիները[20] և այլն։

Թորոս Ա իշխանը վանքերի համար կատարում է մեծ նվիրատվություններ՝ զանազան արտոնություններ տալով հոգևորականությանը[21]։

Այդ փաստը մեկ անգամ ևս պատմականորեն արդարացնում է դրամի վրա եղած աղօթք բառի նշանագրային արտահայտությունը և հաստատում դրամը Թորոս Ա իշխանին վերագրելու հավանականությունը[22]։

МОНЕТЫ КИЛИКИЙСКОГО КНЯЗЯ ТОРОСА

М. Е. КАРАПЕТЯН

Резюме

Первые монеты киликийского армянского государства были отчеканены князьями из рода Рубенян /1080—1198/. К сожалению, до нас дошло лишь несколько экземпляров, плохой сохранности, чем затрудняется их классификация и расшифровка.

В Государственном историческом музее Москвы хранится киликийская монета с армянской надписью «Торос», которая помогает пересмотреть некоторые положения, связанные с ее датировкой и прочтением.

По всей вероятности, она принадлежала князю Торосу 1 (1100—1123). Изучение надписей и монограмм на обеих сторонах монеты позволило прочитать: «Торос, сын Рубена, молитвами».

---

20 Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հավաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 121։

21 Նույն տեղում։

22 Այս հաղորդումը պատրաստ էր տպագրության, երբ ստացանք Զ. Պտուկյանի 1970 թ. հրատարակած „Three notes on Armenian coins" հոդվածը, ուր նա անդրադարձել է Ռուբենյան Թորոս իշխանի դրամին, նկատի ունենալով մեկ այլ օրինակ, որին հարկ է անդրադառնալ առանձին։